
**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ «ՌԱԶՄԱԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՉՄԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(1920-1930 - ԱԿԱՆ ԹԹ.)**

ՄՏԵՓԱՆՅԱՆ Խ. Ռ.

1920 թ. հայ-թուրքական պատերազմում հայկական բանակի պարտություններից հետո՝ Բաքվում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (Հայհեղկոմ) 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Բջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին: Հայհեղկոմը խոստանում էր Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և նոր կյանք կառուցել:

1920 թ. դեկտեմբերի 2-ին, մի կողմից, ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեզրանի և, մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նա-խատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Մահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում էր ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստ և 2 ձախ դաշնակցական, Դաշնակցություն և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը¹: Մակայն բոլշևիկյան նորաստեղծ իշխանությունը չկատարեց իր ստանձնած պարտավորությունները:

Հայաստանի կոմունիստները, չունենալով երկրի զարգացման սեփական ծրագիր, կրկնում էին Ռուսաստանի փորձը, որի ամենավառ օրինակը «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումն էր: Դրա հիմքում դրված էր պարենամասնատրումը: Գյուղացուն թողնվելու էր նրա պարենի մի մասը (ուտելու և սերմացուի համար), իսկ մնացածը բռնագրավվելու էր պետական-քաղաքական կարիքները հոգալու նպատակով: Պետականացվելու էին նաև բոլոր գործարանները,

¹ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը (Հայրենիք, ամսագիր, Բոստոն, 1926, հոկտեմբեր, էջ 101-102):

արտեստանոցները, արտադրամիջոցները²: Չնայած այն հանգամանքին, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Ռուսաստանում իրեն չէր արդարացրել, Հայաստանի նորընձա ղեկավարությունը որոշեց գործադրել այն: Պարենավորման ժողկոմիսարիատի, տեղական հեղկոմների, բանակի անմիջական մասնակցությամբ գյուղերում իրականացվեցին բռնագրավումներ, որոնք տեղի էին ունենում խորհրդային բանակին օգնելու և այլ պատճառաբանություններով: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն հայ գյուղացիներին կոչ էր անում սեփական փոխադրամիջոցներով հաց հասցնել Կարմիր բա-նակին³:

Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի հրամանով բռնագրավվում են նաև գործարանները, եկեղեցու կալվածքները, ինչպես, օրինակ, Պ. Էսապովի պահածոների գործարանը⁴, պետականացվում են բոլոր մասնավոր, եկեղեցական հողերը⁵, անտառները⁶: Բոլշևիկները բռնագրավում էին ոչ միայն խոշոր սեփականատերերի ունեցվածքը: Սակայն պետք է նշել, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականության հարցում Հայաստանի կոմունիստական իշխանության մեջ տարակարծություն կար: Պատմաբան Ա. Հակոբյանը գրում է, որ բռնագրավումների քաղաքականության առումով բոլշևիկների մեծամասնությունը (Գ. Ալիխանյան, Ա. Նուրիջանյան և ուրիշներ) կողմ էր առավել կոշտ և բռնի քայլերին, իսկ փոքրամասնությունը (Ս. Կասյան, Ա. Մոսվյան, Ա. Բեկզադյան) ավելի հանդուրժող էր և դեմ է արտահայտվել զանգվածային բռնագրավումներին⁸: Նշենք, որ ռազմական կոմունիզմի սխալականությունն ընդունեցին նաև ավելի վաղ շրջանի խորհրդային պատմաբանները, ինչպես, օրինակ, Արշավիր Հակոբյանը⁹: Այնուամենայնիվ, բռնագրավումների ալիքը մեծ ընդգրկում ուներ¹⁰:

Չնայած ներքին տարաձայնություններին՝ հայ բոլշևիկները իշխանությունն իրենց ձեռքը վերցնելուց անմիջապես հետո սկսեցին ընդօրինակել Ռուսաստանում ձախողված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Բռնագրավումներն

² Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 21:

³ Կոմունիստ, 14.XII.1920:

⁴ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1253, ց. 1, գ. 2, թ. 2:

⁵ Նույն տեղում, թ. 1:

⁶ Նույն տեղում, թ. 4-5, գ. 4, թ. 1:

⁷ Տե՛ս Կասյան Ա., Ընտիր երկեր, Ե., 1967, էջ 185:

⁸ Հակոբյան Ա., Փետրվարյան ապստամբությունը հայ պատմագրության մեջ, (Վե՛ր համահայկական հանդես, 2011, թիվ 1, էջ 138):

⁹ Հակոբյան Ա., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948, էջ 54:

¹⁰ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության շրջանակում իրականացվող բռնագրավումներին բավական ընդգրկուն անդրադարձ է կատարել նաև 1921 թ. փետրվարյան ապստամբության հետևանքով Հայաստանում իշխանության եկած Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանը» (տե՛ս 22, 26.II, 8. III.1921):

իրականացվում էին ամենակոպիտ ձևերով, հայ կոմունիստները հաշվի չէին առնում Հայաստանի և հայ ժողովրդի յուրահատկությունները և կարճ ժամանակամիջոցում բռնագրավումների անվան տակ կիրառեցին ավերի ու թալանի գործադրման բազմապիսի մեթոդներ:

Միյուրքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում լուրջ քննարկման առարկա դարձավ Խորհրդային Հայաստանում կիրառվող «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որն էլ, ի դեպ, 1921 թ. հակաբոլշևիկյան փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկն էր:

«Ռազմական կոմունիզմի» վերաբերյալ հնչեցված գնահատականների մեջ առանձնանում են վտարանդության մեջ հայտնված Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների տեսակետները: Այս-պես, Կոմիտեի նախկին անդամ Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ) գրում էր, որ հայիեղկոմի որդեգրած բռնությունների քաղաքականությունը աննախընթաց դաժանություն ուներ: Բոլշևիկները փորձում էին բռնությամբ վարչաձև փոխել՝ մոռանալով, որ բոլոր հե-դափոխություններն ու ապստամբությունները ծնունդ են բռնությունների¹¹:

Իրազեկը նշում է, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրվանից սկսված բռնագրավումները շուտով սովորական են դառնում: Ազգաբնակչությանը թալանում էին ամենուր՝ թե քաղաքներում, թե գյուղերում: «Եւ որովհետեւ գործը չափազանց վատ էր կազմակերպուած, իսկ գործադրողն էլ մեծ մասամբ անբարոյ, աւազակ ու պատեհապաշտ տարրեր էին, ուստի «բռնագրաւում» կոչուած կառավարական այդ ձեռնարկութիւնը վերածուեց համատարած կողոպուտի ու դարձաւ իսկական աղէտ ամբողջ երկրի համար»¹²:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախկին նախագահ Ս. Վրացյանի կարծիքով, բռնագրավումներն ավելի խստացան, երբ Հայաստան եկավ Չեկայի նախագահ Գ. Աթարբեկյանը¹³: Վրացյանն արձանագրում է, որ առաջին հերթին բռնագրավում էին գյուղացիների պարենը¹⁴:

Պատահական չէ, որ «ռազմական կոմունիզմի» հանդեպ իրենց խորին դժգոհությունն են հայտնում Խորհրդային Հայաստանի իշխանությունների դեմ բարձրացված ժողովրդական ապստամբության ղեկավարները: Թե՛ Վրացյանը, թե՛ Իրազեկը համոզված էին, որ փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային էր բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը՝ իր ամենադաժան դրսևորումներով:

¹¹ Իրազեկ, Փետրուար 18, Յուշամատեան Հ. Յ. Դաշնակցութեան (1890-1950) (կազմ.՝ Ս. Վրացեան), Բոստոն, 1950, էջ 307:

¹² Նույն տեղում, էջ 308:

¹³ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից (Հայրենիք, ամսագիր, 1924, յունուար, էջ 86):

¹⁴ Մասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը (Հայրենիք, ամսագիր, 1925, հոկտեմբեր, էջ 99):

Հատկանշական է, որ բռնագրավումների մեթոդները աստիճանաբար «կատարելագործվել» են: Ս. Վրացյանը գրում է. «Ամենավարպետ ծրագրուած ու կազմակերպուած գործերից մէկն էլ, անշուշտ, եղաւ «Պարէնի շաբաթը» կամ, ինչպէս Երեւանցիք աւելի ճիշտ բնորոշել էին, «թալշաբաթը» (թալանի շաբաթը), յունուար ամսի վերջերին»¹⁵: Ոգևորված «թալշաբաթ»-ի «հաջողություններով» բոլշևիկները մտադիր էին այլ «շաբաթներ» ևս իրականացնել, օրինակ՝ «սպիտակեղէնի շաբաթ»: Վրացյանը հեզնանքով մատնանշում է, որ այս կերպ «Երեւանը թօթափում էր իր վրայից բուրժուական նախապաշարումները եւ ամուր կերպով ոտք կոխում «կօմունիստական շինարարութեան» ճանապարհի վրայ: Առաջաւոր Ասիայի շէմքին, հայ «պրօլետարիատը» կատարում էր իր պատմական առաքելութիւն»¹⁶: Փաստորեն, կոմունիստական շինարարություն ասելով, հայ բոլշևիկները նկատի ունէին ժողովրդի ունեց-վածքի թալանն ու կողոպուտը:

Բռնագրավումները գնալով ավելի անհերթէթ էին դառնում: Ըստ Վրացյանի, հեղկումները գյուղերում պահանջում էին ոչ միայն ոչխար, կով և հավ, այլև՝ յուղ, պանիր ու ձու: Սևանա լճի ավազանի գյուղերում պարտավոր էին ձուկ մատակարարել բոլշևիկներին: Որոշ գյուղերից պահանջում էին որսի կենդանիներ, օրինակ՝ Ջրվեժ գյուղի վրա կաքավի տուրք էր դրվել¹⁷: Խուզարկված տներից հաճախ տանում էին ոչ միայն կենդանիներ և պարեն, «այլև դրամ, ոսկեղէն ու գոհարեղէն, գորգեր, մետաքսի եւ այլ թանկարժէք կտորներ, շաքար, սապոն, զանազան հագուստ»¹⁸:

Նշված խնդրին անդրադառնալիս Ս. Վրացյանը մատնացույց է անում նաև բոլշևիկ պատմաբան Բ. Բորյանի աշխատությունը և եզրակացնում, որ բոլշևիկ պատմաբաններն անգամ քննադատում էին այդ քաղաքականությունը¹⁹: Բ. Բորյանը խորհրդային այն եզակի պատմաբաններից էր, որ համարձակություն էր ունեցել վերհանելու հակաբոլշևիկյան ապստամբության իրական պատճառները՝ դրանց մեջ ընդգծելով նաև բռնագրավումների հիմնահարցը: «Առանց կազմակերպված և կարգապահ վարչամեքենայի, առանց քարոզչական նախապատրաստական աշխատանքի և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները, Հեղկոմը կարգախոս է հրապարակ նետում. Բռնագրավել և գրավել քաղաքների մասնավոր անձանց պարենն ու գյուղացիության հացի պաշարը», - բոլշևիկների քաղաքականության հակաժողովրդական բնույթը մերկացնում է Բ. Բորյանը²⁰: Ի դեպ,

¹⁵ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից (Հայրենիք, ամսագիր, 1924, մարտ, էջ 111):

¹⁶ Նույն տեղում, էջ 113:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, 1924, յունուար, էջ 86:

¹⁹ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Բոստոն, 1941, էջ 206:

²⁰ Борьян Б. Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.-Л., 1929, с. 126.

խորհրդային պատմաբանի այս տեսակետին անդրադառնում է նաև «Դրօշակ» պարբերականը²¹:

Միյուրքահայ գործիչները դեմ էին նաև բոլշևիկյան իշխանությունների այն քաղաքականությանը, ըստ որի, բռնագրավված պարենը և ապրանքները դուրս էին բերվում երկրից: «Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «Կարմիր բանակին» նուէր էր ուղարկում պետական պահեստների եւ ժողովրդից բռնագրաւուած պաշարը՝ սպիտակ ալիւր, խտացուած կաթ, կակաօ, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն եւ այլն»²²: Մինչ ժողովուրդը Ռուսաստանից էր օգնություն սպասում, իրենից վերջին պատառը խլելով՝ ուղարկում էին Ռուսաստան²³:

Բոլշևիկյան սարսափների միջով անցած տարագիր հայ գործիչ Արմեն Սևանը բռնագրավումները բնորոշում է որպէս «պաշտօնական թալան», և դժգոհում, որ ժողովրդի ապրուստի վերջին միջոցները զենքի ուժով խլելով կերակրում էին Հայաստանում գտնվող ռուսական զորքին կամ «նվեր» էին ուղարկում Բաքվի ու Մոսկվային բանվորությանը²⁴:

Փաստորեն, բռնագրավված իրերի մեծ մասն ուղարկվում էր Հայաստանից դուրս, երբ Հայաստանում դրա կարիքն ավելի էր զգացվում: Սա արվում էր այն անհեթեթ միտումով, որ Ռուսաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին հավատացնեն, թէ սոցիալիստական երեք հանրապետությունների միջև կանոնավոր ապրանքափոխանակություն է սկսվել: Բացի այդ, Հայաստանի բոլշևիկ ղեկավարները ջանում էին Ռուսաստանի բոլշևիկներին ապացուցել, որ իրենք նվիրյալ կոմունիստներ են:

Միյուրքահայ գործիչներից Ավ. Արշակունին, խոսելով բռնագրավումների ժամանակ գործադրված կամայականությունների մասին, նշում է, որ դրանք երբեմն ավարտվում էին ընտանեկան պատիվն անարգելով²⁵: Իսկ Օ. Մխիթարյանը գրում է. «Կոմունիզմ ըսելով անոնք (բոլշևիկները - Ս.Խ.) հասկցան սանձարձակ թալան, 18-րդ դարու պարսկական խաներու յատուկ բռնութիւններ եւ մարդ անհատի բարոյական ոչնչացումը եւ դժոխային ստրկացումը»²⁶:

Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետ Հ. Քաջագունին, որ 1923 թ. հանդես էր եկել Դաշնակցությանը քննադատող ընդարձակ զեկույցով և հեռացել կուսակցությունից, քննադատում է նաև բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը՝ նշելով, որ այդ Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր. «Ամեն մի դիկտատուրա՝ արդեն իր էությունը՝ բռնութիւն է եւ ուրիշ բան չի կարող

²¹ Դրօշակ, Փարիզ, 1931, N 1-2, էջ 4-8:

²² Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 204:

²³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Ե., 1993, էջ 544:

²⁴ Արմեն Սևան, Փետրուար 18-ի յեղափոխութիւնը (Վէմ, Փարիզ, 1936, Դ տարի, թիւ 1, էջ 93):

²⁵ Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը (Հայրենիք, ամսագիր, 1927, փետրուար, էջ 43):

²⁶ Հայրենիք, օրաթերթ, Բոստոն, 18.II.1928:

լինել: Ամեն մի յեղափոխական կառավարություն՝ կռուի շրջանում՝ հարկադրված է դիմելու կտրուկ ու ծայրայեղ միջոցների, - սա էսս մի անխուսափելի անհրաժեշտություն է, որ բղխում է դրութեան էությունից: Բայց փոլշեիկների բռնությունը ու Հայաստանում գործադրված միջոցների դաժանությունը ունեն մի առանձնայատուկ գիծ, որ ամենից աւելի գրգռիչ ու անհանդուրժելի էին, - այն, որ անիմաստ էին բռնությունները, աւելորդ ու աննպատակ... Փետրուարեան ապստամբությունը փոլշեիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնությունների ու մանաւանդ անվերջ բռնագրաւումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսութեան վերջին մնացորդները, գրկում էին սովահար մարդկանց վերջին կտոր հացից»²⁷:

Արժե հիշել նաև այն իրողությունը, որ ստեղծվել էր բնակարանների բռնագրավման հատուկ հանձնախումբ՝ նոր ժամանած փոլշեիկ գործիչներին և զինվորականներին անհրաժեշտ բնակարաններ տալու համար: Հայաստանի Առաջին հանրապետության մեկ այլ վարչապետ՝ Ա. Խատիսյանը, գրում է, որ շուրջ 20 տարի աշխատելով ցարական ռեակցիայի պայմաններում՝ չէր տեսել այնպիսի բռնություններ, ինչպիսիք իրագործում էին փոլշեիկները Հայաստանում իշխանության գալուց անմիջապես հետո»²⁸:

Այսպիսով, Հայաստանից տարագրված՝ Առաջին հանրապետության վարչապետները փետրվարյան ապստամբության պատճառների մեջ իրավամբ առանձնացնում էին փոլշեիկների գործադրված «ռազմական կոմունիզմը»: Այդ քաղաքականությունը խիստ քննադատության ենթարկեցին նաև սփյուռքյան պարբերականները: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, օրինակ, նշում է, որ բռնագրավումներն ուղեկցվում էին դաժանություններով ու անգթությամբ²⁹: Թերթը հետևություն է անում, որ կառուցողական աշխատանք կատարելու փոխարեն խորհրդային իշխանությունը կազմակերպված կողոպուտ էր իրականացնում Հայաստանում: Այստեղից բռնագրավվում և Ռուսաստան էին տարվում նույնիսկ Ամերիկայից որպես օգնություն բերված խտացրած կաթն ու շաքարը: Ամերիկայից ստացված պարենամթերքը բռնի կերպով Ադրբեջան և Ռուսաստան տեղափոխելու մասին է գրում նաև Կ. Պոլսի «Ճակատամարտը»: Թերթը տեղեկացնում է, որ 1921 թ. հունվարի 25-ը հայհեղկոմը հայտարարում է միօրյա խուզարկության օր. «Հրատարակուած էր հրաման մը, որուն համաձայն իւրաքանչիւր անձ իրաւունք պիտի ունենար իր մօտ պահելու 1 ամսուան պաշար, այսինքն 1 փութ ալիւր, 2 ֆունտ իւղ եւ այլն: Բայց զարհուրելի բան էր այդ խուզարկութիւնը, որ ամբողջ 24 ժամ տեւեց: Խուզարկութիւն չէր այդ, այլ թալան: Թալանէն աւելի սոսկալի բան մը: Կամայա-

²⁷ Քաջագունի Յ., շ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 46:

²⁸ Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը (Հայրենիք, ամսագիր, 1926, հոկտեմբեր, էջ 103):

²⁹ Հայրենիք օրաթերթ, 19.II. 1931:

կանօրէն տուներէն առին տարին ինչ որ գտան, մասնաւորաբար իրենց խստութիւնը գործ դնելով արեւմտահայութեան վրայ»³⁰: «Ճակատամարտի» համարներից մեկում խոսվում է մասնավոր գրադարանների բռնագրավումների մասին, ինչը բոլշևիկները «պատճառաբանում» էին նրանով, որ «բուրժուաները» գիրք չպետք է կարդան³¹:

Սփյուռքի թերթերը, բոլշևիկների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը իրավացորեն դիտարկելով փետրվարյան ապստամբության պատճառների շարքում, ներկայացնում են խորհրդային իշխանությունների բազմաթիվ կամայական գործողություններ, որոնք իրականացվում էին «պետական և հեղափոխական կարիքների համար» տեղի ունեցող բռնագրավումների ժամանակ:

«Ռազմական կոմունիզմին» անդրադարձել են նաև սփյուռքահայ ոչ դաշնակցական գործիչները: Կահիրեում հաստատված ականավոր պատմաբան Ա. Ալպոյաճյանը, համոզված, որ դա փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր, գրում է՝ գավառներում, կենտրոնական իշխանության աչքից հեռու, տեղական բախտախնդիր և անբարեխիղճ տարրերը, օգտվելով առիթից, «բնակչությունը կը կեղեքէին, ինչ որ գիւղացիները կը դառնացնէր: Պոլշէվիքները կը պահանջէին անոնցմէ, որ իրենց ուտեստի մթերքները տրամադրէին Կարմիր բանակին: Աւարառու արշաւախումբեր կը շրջէին, որոնք կը կատարէին խուզարկութիւններ, զէնք ու զինւորական հագուստ կը խլէին գիւղացիներէն, արջառ և ոչխար պաշտօնական բռնագրաւմանց կ'ենթարկէին, իսկ անպաշտօն կերպով կը յափշտակէին ամէն ինչ (իւղ, մեղր, պանիր, զարդեր, դրամ եւ այլն)»³²: Բռնագրավումների հետևանքը պետք է լինէր դժգոհողների թվի ավելացումը: «Ապրանքներու բռնագրաւումը, գործարաններու և աշխատանոցներու նոյն իսկ ջրադացներու և աղօրիքներու պետականացումը և այլն, ոչ նուազ նպաստեցին՝ ստուարացնելու գանգատողներու և դառնացողներու թիւը»³³:

Հակադաշնակցական գործիչ Ս. Բաղդասարյանը բռնագրավումների վերաբերյալ գրում է. «Յեղկոմը բոլորովին հաշի չառաւ Հայաստանի ուրոյն պայմաններն ու վարեց այնպէս, ինչպէս մեծամասնականները վարել էին Ռուսաստանում և դա եղաւ Հայաստանի Յեղկոմի ամենախոշոր սխալը, որն և ծնունդ տուեց 1921 թ. փետրուարեան ապստամբութեանը»³⁴:

Ակնհայտ է, որ Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների իրագործած «ռազմական կոմունիզմը» քննադատեցին ոչ միայն իշխանությունից զրկված դաշնակցականները: Սփյուռքի բազմաթիվ ոչ դաշնակցական գործիչներ ևս բոլշևիկներին մեղադրեցին

³⁰ Ճակատամարտ, Կ. Պոլիս, 5.III.1921:

³¹ Նույն տեղում, 9.III.1921:

³² Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ. Թէոդիկ), ԺՁ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 250:

³³ Նույն տեղում, էջ 251:

³⁴ Բաղդասարեան Ա., Խորհրդային Հայաստան, պր. առաջին, Թէհրան, 1927, էջ 13:

Հայաստանում լայնածավալ բռնագրավումներ իրականացնելու համար: Ավելացնենք նաև, որ շատ վայրերում բռնկվող «տարերային ըմբոստություններ» ճնշվում էին Երևանից ուղարկված պատժիչ զորամասերի կողմից³⁵:

Անշուշտ, Ռուսաստանում քննություն չանցած բռնագրավումների դաժան փորձի կիրառումը պատերազմներից տնտեսապես քայքայված Հայաստանում առնվազն անստություն էր: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները միակարծիք պնդում էին, որ այն 1921 թ. Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր:

**ПОЛИТИКА “ВОЕННОГО КОММУНИЗМА” В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ОЦЕНКЕ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (1920-1930-ЫЕ ГГ.)**

СТЕПАНЯН Х. Р.

Резюме

Армянская диаспора весьма критически отнеслась к политике “военного коммунизма”, проводимой в советизированной Армении, которая не могла не сказаться на и без того тяжелом социально-экономическом положении республики, переживающей глубокий кризис. Представители Армянской диаспоры были единодушны в том, что Февральское восстание 1921 г. было вызвано именно неоправданной политикой “военного коммунизма”.

**THE POLICY OF "MILITARY COMMUNISM" APPLIED IN SOVET
ARMENIA BY THE SOCIAL-POLITICAL THOUGHT OF
ARMENIAN DIASPORA (1920-1930 IES)**

KH. STEPANYAN

Abstract

The social-political thought of Diaspora highly criticized the policy of «military communism» of the newly sovietized Armenia in 1920-1930 ies. The reapplication of cruel experience that was failed in Soviet Russia was a real nonsense for Armenia that was destroyed after the wars. Moreover, the explanations for the expropriations have no justification. The policy of «military communism» in Armenia that was facing serious social-political period also had its consequences. The representatives of the social-political thought of Diaspora were of the same opinion that it was the main reason for February revolution.

³⁵ Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից (Հայրենիք, ամսագիր, 1924, մարտ, էջ 114):